Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11002/23-ԱԴ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 3

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեցների և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 1. Երևան - Աջափնյակ և Դավթաշեն |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023 - 31.12.2023թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2023 - 30.09.2023թթ. |
| **Ներկայացման օր** | 09.10.2023թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN YERVAND
2508730335
Date: 2023.10.09
17:17:03 AMT

2. **Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 9 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում սոցիալական նպաստ համակարգում): Թվով 4 շահառուի համար սոցիալական աշխատողը կազմակերպել է եռամսյակային հրատապ օգնության ստացում: Կազմակերպության տնային սպասարկման ծառայությունից օգտվելու համար դիմած պոտենցիալ 5 շահառուներին աջակցություն է տրամադրվել ուղեգրման գործընթացի կազմակերպման հարցում: Պոլիկլինիկայից անվճար դեղորայքի ստացման համար յուրաքանչյուր ամիս շահառուների համար ՄՍԾՏԿ-ից անապահովության միավորի 13 տեղեկանք է ձեռքբերվում:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 2 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 4 միջոցառում, որոնց մասնակցել են 7 շահառու.
  - «Միասին» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական հասարակական կազմակերպության կողմից ԵԽՀ «Կլոր Սեղան» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ ՀՀ Կոտայքի

մարզում՝ Ծաղկաձորի «Sion Rezort» հանգստյան տանը «Ոսկե սերունդ» ճամբար
  - էքսկուրսիա դեպի Հառիճավանք
  - Էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք
  - Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնի նշում:
- **Կենցաղային սպասարկման աջակցության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող 24 շահառուի համար պետպատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 5 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 4 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում (շարունակական), 13 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 2 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 2 շահառուի համար կատարվել է երակային ներարկում (շարունակական): 1 շահառուի համար կատարվել է սպասարկող պոլիկլինիկայի փոփոխություն: Թվով 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: 1 շահառուի համար տնային պայմաններում իրականացվել է էլեկտրասրտագրության կազմակերպում:
  Երկու պոտենցիալ շահառուի բուժքույրը աջակցել է բժշկական քարտի լրացման գործում, 3 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 4 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
• «Ոսկե սերունդ» ճամբարում շահառուների ակտիվ առօրյան (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0ZkHcQj9viPyrviVW7K2tqbwWJEgK2yXzeJg5cJ7eG6ajCDUEiPWiJx4NbjfHonCql&id=100081543423963)

• Էքսկուրսիա դեպի Հաղիճավանք վանական համալիր (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0QVC7DF1QqMvAUMvkuBoKcddJC4YetmRexJVs5CJYCi8oG23ecGMv1L6wLSvuegHxl&id=100081543423963 ):
• Էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք վանական համալիր (տե՛ս հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02CLMD813ohrrsCSAsNQmP4BmAGMZTEHvgpDkkxeAZqmEre9t25DcAaV7zAdNmHnvzl&id=100081543423963 ):
•Կենտրոնում կազմակերպված Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0XTpHwMwWHJEmE5wevLtRrEiDeDBjQnP6PKmsVs5dvAu15vPTGXs3V3dtcdqsLMqzl&id=100081543423963 ):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Աջափնյակ և Դավթաշեն համայնքները սպասարկող սոցիալական աշխատողը մասնակցել է «Մարդը Կարիքի Մեջ» կազմակերպության կողմից «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի աշխատակիցների համար «սոցիալական պաշտպանություն» թեմայով կազմակերպված վերապատրաստմանը:
Աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար Աջափնյակ և Դավթաշեն համայնքների տնային խնամքի ծառայության տրամադրման մեջ ներգրավված բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Էթիկական կոդեքս» և «Անձնական տվյալների պաշտպանություն» թեմաներով դասընթացներին:

Հավելված 7
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11002/23-ԱԴ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 76 / 74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 66 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 1 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 1 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 70 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 4<br>Բ - 70 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 7 |
| 6. | խորհրդատվական օգնություն | - |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանի խորհրդատվություն | 1 |

Կազմակերպության նախագահ՝ Ե. Մխիթարյան ______________________

«09_»_10__ 2023 թ.